

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2015 թվականի հունվարի 29-ին
Պետական գրանցման համարը 3001526



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 13-Ն

ք.Ստեփանակերտ

**ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ
ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի ԹԻՎ 34/122 ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 28-Ի ԹԻՎ 38/152 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**

1. Սահմանել տեղամասային ընտրական հանձնաժողովին ներկայացվող՝ ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետևյալ որոշումները.

1) 2007 թվականի մայիսի 23-ի «Ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ տեղեկանքի ձևը սահմանելու մասին» թիվ 34/122.

2) 2007 թվականի հունիսի 28-ի «Քվեարկությանը նախորդող հինգ օրվա ընթացքում և քվեարկության օրը քաղաքացիներին ընտրողների ցուցակներում ընդգրկելու կարգի մասին» թիվ 38/152:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Ս.ԱՐԶՈՒՄՄԱՆՅԱՆ

N _____
« _____ » _____ 20 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Ընտրողների ցուցակում ընդգրկված չլինելու մասին

Քաղ. _____
անուն, հայրանուն, ազգանուն

Անձնագիր _____
սերիա, համար

Հաշվառված _____
հաշվառման վայր

Դուրս է մնացել թիվ _____ ընտրատարածքի թիվ _____ ընտրական տեղամասի
ընտրողների ցուցակից:

Խնդրում եմ ընդգրկել թիվ _____ ընտրատարածքի _____ թիվ _____
համայնքը՝ ՏԻՄ ընտրության դեպքում
ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում:

Ներկայացվում է տեղամասային ընտրական հանձնաժողով:

լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման
ղեկավարի անուն, ազգանուն

ստորագրություն

« _____ » _____ 20 թվական

Կ.Տ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ